Ճշմարիտ և կենդանի եկեղեցին

Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Դեյվիդ Ա. Բեդնարն ուսուցանել է.

Տերը հայտարարել է, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին «միակ ճշմարիտ և կենդանի եկեղեցին է ողջ երկրի վրա» (Վ&Ու 1.30): Այս վերականգնված Եկեղեցին ճշմարիտ է, որովհետև այն Փրկչի Եկեղեցին է. Նա է «ճանապարհը եւ ճշմարտութիւնը եւ կեանքը» (Հովհաննես 14.6): Եվ այն կենդանի եկեղեցի է Սուրբ Հոգու գործածության և պարգևների պատճառով: (Դեյվիդ Ա. Բեդնար, «Ստացիր Սուրբ Հոգին», *Լիահոնա*, նոյեմբեր 2010, 97)

Առաջին նախագահությունից նախագահ Դալլին Հ. Օուքսն ուսուցանել է.

Երեք հատկանիշներ՝ (1) վարդապետության լրիվությունը, (2) քահանայության զորությունը, և (3) վկայությունը Հիսուս Քրիստոսի մասին, բացատրում են, թե Աստված ինչու է հռչակել, որ . . . սա միակ ճշմարիտ և կենդանի եկեղեցին է երկրի վրա: . . .

Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը ամբողջական է, համընդհանուր, ողորմած և ճշմարիտ: . . .

Ունենալով քահանայության զորություն՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու ղեկավարները և լիազորված անդամները լիազորված են կատարելու քահանայության անհրաժեշտ արարողությունները, օրինակ՝ մկրտությունը, Սուրբ Հոգու պարգևի շնորհումը և հաղորդության սպասավորումը:

Քահանայության բանալիները, որոնք կրում է մեր սիրելի մարգարեն . . . և յուրաքանչյուր հաջորդող մարգարեն և Եկեղեցու նախագահը, իրավունք են տալիս նրան հայտնություն ստանալ ամբողջ Եկեղեցու անունից: Այս Եկեղեցին «կենդանի է», քանի որ մենք ունենք մարգարեներ, որոնք շարունակում են մեզ հայտնել Տիրոջ խոսքը, որն անհրաժեշտ է մեր ժամանակի համար:

Երրորդ պատճառը, թե ինչու ենք մենք միակ ճշմարիտ Եկեղեցին, այն է, որ մենք ունենք հայտնությամբ տրված ճշմարտություն Աստծո էության և Նրա հետ մեր հարաբերությունների մասին, և, հետևաբար, մենք ունենք առանձնահատուկ վկայություն Հիսուս Քրիստոսի մասին: (Դալլին Հ. Օուքս, «Միակ ճշմարիտ և կենդանի եկեղեցին», New Era, օգոստոս 2011, 3–5)

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_022-1